

**2011 ԹՎԱԿԱՆԻ Ի ԿԻՍԱՄՅԱԿԻՆ ՎԱԶԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ
ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ**

1. Մաքրվել են գերեզմանատան, հուշարձանի տարածքները, գյուղի օրվա կարգավորվող ջրամբարները:
2. Հարթեցվել են համայնքի բոլոր ճանապարհները:
3. Մարտի 8 – ին կանաչ միջազգային տոնի կապակցությամբ գյուղապետարանի կողմից կազմակերպվել է խնջույք և նվերներ է տրվել 60 – 70 տարեկան կանանց:
4. «Վարձատրվող հասարակական աշխատանքներ» ծրագրով կատարվել են հետևյալ աշխատանքները՝
 - Ծառատունկ գյուղի տարածքում՝ 100 հատ
 - Գյուղամիջյան ճանապարհների մաքրում և բարեկարգում
 - Գերեզմանատան ցանկապատի վերանորոգում՝ 100 մ. և տարածքի մաքրում:
 - Աղբահորի փորում
 - Ներհամայնքային ճանապարհների խճապատում՝ 3, 4, 5, 6, 8, 9, 10, 11, 15, 19-րդ փողոցները՝ 3580 քառ / մ:
5. Համայնքապետարանի կողմից մաքրվել և վերանորոգվել է շուրջ 1.5 կմ ոռոգման ջրի համակարգ:
6. Գյուղապետարանի կողմից կազմակերպվել է մեծ միջոցառում և խնջույք հայրենական մեծ պատերազմի հաղթանակի ու Շուշիի ազատագրման օրվա կապակցությամբ:
7. Աժ պատգամավոր՝ Միքայել Վարդանյանի և գյուղապետարանի կողմից հայրենական մեծ պատերազմի վետերաններին հանձնվել են նվերներ:

Վազաշեն համայնքի ղեկավար՝  **L. Բաղիրյան**

2011 ԹՎԱԿԱՆԻ II ԿԻՍԱՄՅԱԿԻՆ ՎԱԶԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

1. Գյուղապետարանի կողմից կազմակերպվել է մեծ միջոցառում և խնջույք անկախության 20 - ամյակի կապակցությամբ:
2. ՀՀ «Սոց ներդրումներ» հիմնադրամի կողմից համայնքային կենտրոնի անավարտ շինարարությունը ավարտին է հասցվել և հանձնվել շահագործման:
3. Մաքրվել են գերեզմանատան, հուշարձանի տարածքները, գյուղի օրվա կարգավորվող ջրամբարները:
4. Համայնքի կենտրոնական փողոցի կանգառներում կառուցվել են 3 հովանոց ծածկեր:
5. «Հրաժեշտ այբբենարանին» միջոցառման ժամանակ գրեմական պիտույքներ և հիգենիայի պարագաներ են տրվել երեխաներին գյուղապետարանի կողմից:
6. Աժ պատգամավոր՝ Միքայել Վարդանյանի կողմից սեպտեմբերի 1-ի առթիվ I, II, և III դասարանցիներին տրվել է դպրոցական պայուսակներ և գրեմական պիտույքներ:
7. Համագյուղացի Աշոտ Խաչատրյանի հովանավորությամբ ներկվել են գերեզմանատան ցանկապատի մի մասը:
8. «Միջնահանդ» թաղամասի ոռոգելի ջրի խողովակաշարը երկարացվել է 100 մ.:
9. Անտառի կապտածները հնարավորին սահմաններում վերանորոգվել և ծածկվել են արտաքին անձրևաջրերից պաշտպանելու համար:
10. Աժ պատգամավոր՝ Միքայել Վարդանյանի կողմից հատկացվել է 1000 մ. մետաղյա տարբեր տրամաչափի խողովակ, որով գազաֆիկացվել է 1 – ին փողոցում՝ 1 տուն, 5–րդ փողոցում՝ 4 տուն, 7–րդ փողոցում՝ 12 տուն, 9–րդ փողոցում՝ 1 տուն, 11–րդ փողոցում՝ 1 տուն, 13–րդ փողոցում՝ 1 տուն, 15–րդ փողոցում՝ 4 տուն, 22–րդ փողոցում՝ 3 տուն:
11. Տեղափոխվել է 8-րդ փողոցի օրվա ջրի մատակարարման բաժանարարը մոտ 10 մ-ով:
12. Փոխվել է փողոց 5-ի խմելու ջրի հին խողովակի 70մ. հատվածը նորով:
13. Հարթեցվել և խճապատվել են փողոցներ 11-ը և 15-ը, մասամբ էլ փողոցներ 5, 7, 9 և 21-ը:
14. Միջնահանդ թաղամասում ոռոգման ջրագիծը երկարացվել է ևս 120 մ-ով:

15. Փլվածքի տարածքում գտնվող խմելու ջրի խողովակաշարից 100 մ. - 2 անգամ տեղափոխվել է:
16. **Нью Лайф и Армения** կազմակերպության կողմից բաշխվել է հազուստ, կոշիկ սոցիալապես անապահով բնակիչներին:
17. Ամանորի կապակցությամբ **UMKOR** կազմակերպության և գյուղապետարանի կողմից բնակչությանը տրամադրվել է հիգենիկ պարագաներ և քաղցրավենիք:
18. Աժ պատգամավոր Միքայել Վարդանյանը ամանորի կապակցությամբ շնորհավորել է համայնքի բնակչությանը և տրամադրել նվերներով լի պայուսակներ:
- Վերը նշված աշխատանքները կատարվել են բարեխղճորեն և պետ. նորմաներին համապատասխան:

Վազաշեն համայնքի ղեկավար  *L. Բաղիրյան* L. Բաղիրյան